# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-2

ՊԵԿ-ԳՀԾՁԲ-17/2 ծածկագրով գնումների էլեկտրոնային (ARMEPS) համակարգի միջոցով գնանշման հարցման ընթացակարգով ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար՝ հակավիրուսային համակարգչային ծրագրի ձեռքբերման ծառայությունների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի ղեկավարի 29.06.2017թ. N 69/1-Ա հրամանով ձևավորված գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 07.07.2017թ. ժամը 11-00-ին, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մ.Խորենացու-3,7 հասցեում:
Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Գ.Գալստյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Զ.Աղաջանյանը, Ս.Բեժանովը, Ա.Միսակյանը, Դ.Հովհաննիսյանը և քարտուղար Գ.Ղազարյանը:

## Օրակարգ

## Հայտերի բացման և գնահատման մասին

**1.Հայտեր ներկայացրած և չներկայացրած մասնակիցների անվանումները և գտնվելու վայրի հասցեները**

-ՊԵԿ-ԳՀԾՁԲ-17/2 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ Գ.Գալստյանը տեղեկացրեց, որ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-17/2 ծածկագրով գնումների էլեկտրոնային (ARMEPS) համակարգի միջոցով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

1. «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ն (ք. Երևան, Բաշինջաղյան 1 փ. 13/30)
2. «ԻԱՅՍԻՏԵԼԵԿՈՄ» ՍՊԸ-ն (ք. Երևան, Չարենցի 1)
3. «Սոֆթլայն Ինթերնեյշնլ» ՍՊԸ-ն (ք. Երևան, Հ Էմինի 123)
4. «Այյունեթվորքս» ՍՊԸ-ն (ք. Երևան, Պուշկինի փ. 38/1, շին.55)
5. «Նորմա-պլյուս» ՍՊԸ-ն (ք. Երևան, Մաշտոցի 2, տարածք 60)
6. «ԼանԱր Սերվիս» ՍՊԸ-ն (ք. Երևան, Բաբաջանյան 163/13)

**2. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին**

«Էյչ Գրուպ» ՍՊԸ-ի, «ԻԱՅՍԻՏԵԼԵԿՈՄ» ՍՊԸ-ի, «Սոֆթլայն Ինթերնեյշնլ» ՍՊԸ-ի, «Այյունեթվորքս» ՍՊԸ-ի, «Նորմա-պլյուս» ՍՊԸ-ի և «Նորմա-պլյուս» ՍՊԸ-ի կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտերը էլեկտրոնային (ARMEPS) համակարգի կողմից դիտվել է որպես (պիտանի) հայտեր:

**3.Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերի պայմաններին համապատասխանության վերաբերյալ**

1. «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ի, «ԻԱՅՍԻՏԵԼԵԿՈՄ» ՍՊԸ-ի, «Նորմա-պլյուս» ՍՊԸ-ի և «Նորմա-պլյուս» ՍՊԸ-ի կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտերում առկա են հրավերով սահմանված փաստաթղթերը՝ պիտանելիության չափորոշիչը, տեխնիկական չափորոշիչը և ֆինանսական չափորոշիչը, որոնք կազմված են հրավերի պայմաններին համապատասխան:
2. «Սոֆթլայն Ինթերնեյշնլ» ՍՊԸ-ի կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտում առկա են հրավերով սահմանված փաստաթղթերը՝ պիտանելիության չափորոշիչը, տեխնիկական չափորոշիչը և ֆինանսական չափորոշիչը, սակայն բացակայում է հայտի ապահովման տուժանքի մասին համաձայնագիրը և վճարման պահանջագիրը, ինչպես նաև մասնակցի կողմից փաստաթղթերը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ և արտատպելուց հետո փաստաթղթերում տեսանելի չէ նույնականացման քարտի տվյալները:
3. «Այյունեթվորքս» ՍՊԸ-ի կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտում առկա են հրավերով սահմանված փաստաթղթերը՝ պիտանելիության չափորոշիչը, տեխնիկական չափորոշիչը և ֆինանսական չափորոշիչը, սակայն փաստաթղթերը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված են ոչ թե տնօրենի այլ ուրիշ անձի կողմից և բացակայում է տնօրենի կողմից ստորագրողին տրված լիազորագիրը:

## 4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը

| Հ/Հ | Ծառայության անվանումը | Մասնակիցների անվանումները և ներկայացրած գները՝ առանց ԱԱՀ-ի ՀՀ դրամ | | | | | | Մասնակիցների անվանումները և ներկայացրած գները՝ ներառյալ ԱԱՀ-ն ՀՀ դրամ | | | | | | Նախահաշվային գինը ՀՀ դրամ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | «Էյչ Գրուպ» ՍՊԸ | «ԻԱՅՍԻՏԵԼԵԿՈՄ» ՍՊԸ | «Սոֆթլայն Ինթերնեյշնլ» ՍՊԸ | «Այյունեթվորքս» ՍՊԸ | «Նորմա-պլյուս» ՍՊԸ | «ԼանԱր Սերվիս» ՍՊԸ | «Էյչ Գրուպ» ՍՊԸ | «ԻԱՅՍԻՏԵԼԵ ԿՈՄ» ՍՊԸ | «Սոֆթլայն Ինթերնեյշնլ» ՍՊԸ | «Այյունեթվորքս» ՍՊԸ | «Նորմա-պլյուս» ՍՊԸ | «ԼանԱր Սերվիս» ՍՊԸ | |
| 1 | Հակավիրուսային համակարգչային ծրագրի ձեռքբերման ծառայություններ | 7411300 | 7578667 | 5100000 | 7532190 | 7420602 | 6370000 | 8893560 | 9094400 | 6120000 | 9038628 | 8904722.4 | 7644000 | 7777000 |

## 5. Տեղեկություններ հայտերի հետկանչման կամ փոփոխությունների, հայտերի վերաբերյալ կատարված հարցումների մասին

-Հայտերի հետկանչում կամ փոփոխություններ, հայտերի վերաբերյալ կատարված հարցումներ և պատասխաններ չեն եղել:

## 6. Հանձնաժողովը որոշեց՝

Քննարկման արդյունքում գնահատող հանձնաժողովը որոշեց հայտերի գնահատումն իրականացնել նույն նիստի ընթացքում:

1. «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ին, «ԻԱՅՍԻՏԵԼԵԿՈՄ» ՍՊԸ-ին, «Նորմա-պլյուս» ՍՊԸ-ին և «Նորմա-պլյուս» ՍՊԸ-ին ճանաչել հրավերի պահանջների նկատմամբ ոչ գնային պայմաններով բավարար գնահատված հայտ ներկայացրած մասնակիցներ:
2. «Սոֆթլայն Ինթերնեյշնլ» ՍՊԸ-ի հայտը մերժել՝ քանի որ մասնակցի կողմից ներկայացված հայտը չի համապատասխանում հրավերի պահանջներին (բացակայում է հայտի ապահովման տուժանքի մասին համաձայնագիրը և վճարման պահանջագիրը, ինչպես նաև մասնակցի կողմից փաստաթղթերը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ և արտատպելուց հետո փաստաթղթերում տեսանելի չէ նույնականացման քարտի տվյալները):

Համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-ն որոշման 41-րդ կետը՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

ՊԵԿ-ԳՀԾՁԲ-17/2 ծածկագրով գնահատող հանձնաժողովը որոշեց նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնել և էլեկտրոնային եղանակով տեղեկացնել «Այյունեթվորքս» ՍՊԸ-ին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հաջորդ նիստը հրավիրել 2017թ. հուլիսի 11-ին, ժամը 10:00-ին, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մ.Խորենացու-3,7 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Գ.Գալստյան

Անդամներ՝ Զ.Աղաջանյան

Ս.Բեժանով

Ա.Միսակյան

Դ.Հովհաննիսյան

Քարտուղար՝ Գ.Ղազարյան